

ԿՈՎԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՎԻՃՈՒՄԸ

Յ Ե Վ

ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
Մ Ի Զ Ո Ց Ն Ե Ր Ը

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Պ Ե Տ Տ Ր Ա Տ

1 9 3 3

619

4-76

8533

30 JUL 1930
8105 YAM E.S.

619
4-85

my'

ԿՈՎԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՎԻՃՈՒՄԸ
ՅԵՎ
ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ

444
37



ՊԵՏՐՈՍ

1933

ՅԵՐԵՎԱՆ

0100 JUL 00
23 MAY 2013

Քարգմանիչ՝ Ռ. Արմենյան. Տեխ. խմբագիր՝ Գ. Զեմյան
Սրբադրժ՝ Ո. Գառաբջյան
Հրատարակ. № 2510. Գլավիտ № 8083 (Բ)
Պատվ. № 560. Տիրած 2000
Փոքրատ 72×105 1 թերթում 102,400 տպ. նշ.

Պետերատի տպարան Յերեվան

ԿՈՎԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՎԻՃՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԴԵՄ ՊԱՅԲԱՐԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ՊԱՅԲԱՐ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԴԵՄ

Մեր անասնապահության կորուստները դեռևս մեծ
չափերի չեն հասնում, մինչդեռ այժմ իսկ հնարավոր է
այդ կորուստները զգալիորեն պակասեցնել:

Անասնապահության սոցիալիստական վերակառուց-
ման ամենաայժմեական մարտական խնդիրն է անաս-
նապահության այդ կորուստները հասցնել մինիմումի՝
անողոք պայքար հայտարարելով մեր անասնապահա-
նության կորուստների և կոլխոզ-ապրանքային ֆերմա-
ների առողջացման և լրիվ պահպանման համար:

Մեր անասնապահությունը մեծ ֆլուսներ է կրում
մասնավորապես անասունների վարակիչ հիվանդու-
թյուններից, վորոնք խոչընդոտ են հանդիսանում հա-
մայնացրած խոշոր տնտեսությունների կառուցման և
յերբեմն ապրանքաշրջանառությունից դուրս են զցում
ամբողջ շրջաններ:

Այդ պատճառով է, վոր կուսակցությունն ու կա-
ռավարությունն իրենց վորոշումների մեջ շատ անգամ
մատնանշել են, վոր անհրաժեշտ է ամենակարճ ժամա-
նակվա ընթացքում մինիմումի հասցնել անասնապա-
հության ասպարիզում տեղի ունեցող կորուստները, և
առաջին հերթին վարակիչ հիվանդությունների պատ-
ճառած կորուստները:

Այդ վարակիչ հիվանդութիւններէց մեկն է կովերի վարակիչ վիժ մը, վոր մեր անասնապահութեանը շատ զգալի ֆէնսներն է պատճառում և վոր տնտեսութիւնից արմատախիլ անելը չափազանց դժվար է: Դրա համար ել ինչքան շուտ հարկ յեղած ուշադրութիւնը դարձվի այս հիվանդութեան վրա, այնքան հեշտ կլինի կանխել նրա հետագա տարածումը և այնքան քիչ ուժ և միջոց հարկավոր կլինի այդ հիվանդութիւնն արմատախիլ անելու համար այն տնտեսութիւններում, վորտեղ արդեն մուտք է գործել:

ԻՆՉԻՑ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ՎԱՐԱԿԻՉ ՎԻՇՈՒՄԸ

Կովերի վարակիչ վիժումի պատճառը մի հատուկ բացիլ է, վոր առաջին անգամ գտել է դանիացի գիտնական Բանգը. այդ պատճառով ել վարակիչ վիժում առաջացնող բացիլը կոչվում է Բանգի բացիլ: Բանգի բացիլները, ինչպէս նաև բոլոր բացիլները մանրէները այնքան փոքր են, վոր նրանց կարելի չէ տեսնել միայն մանրադիտակ (միկրոսկոպ) կոչված խոշորացնող գործիքի ոգնութեամբ: Այս կենդանի ելակները հղի անասունների մարմնի մեջ արագ բազմանում են և հիվանդացնում են նրան: Բանգի բացիլները հիվանդացնում են միայն հղի կենդանիներին, իսկ վոչ հղի կենդանիներին համար մի առանձին վտանք չեն ներկայացնում:

Հիվանդ հղի կենդանիներին մոտ վարակը լինում է սեռական անցքերի լորձի և արտաթորանքի մեջ: Վիժումի ժամանակ մեծ քանակութեամբ բացիլները դուրս են գալիս՝ զ վակը շրջապատող պատյանների (ընկեր-

քի), նրանց պարունակած հեղուկի և վիժված կամ վաղաժամ ծնված զավակի հետ միասին: Վիժումից կամ վաղաժամ ծնունդից հետո, վիժումի բացիլները հիվանդ կովերի արգանդում համեմատաբար յերկար ժամանակ չեն մնում: Նրանք դուրս են գալիս սեռական գործարանների արտադրած լորձի և հեղուկի հետ միասին՝ դեռ 2—3 շաբաթ, իսկ յերբեմն նույնի կ 6—8 շաբաթ:

Բացի այդ, Բանգի բացիլները վիժումից հետո հիվանդ կովի կաթի մեջ ել կարող են գտնվիլ՝ 2—6 շաբաթ:

Վարակված տնտեսութիւններում Բանգի բացիլները կարելի չէ գտնել նաև չվիժած կովերի կաթի մեջ: Բացիլները կարող են լինել նաև ցուլ բի մարմնի մեջ:

Բանգի բացիլները այնքան ել դիմացկուն չեն և յերկար ժամանակ կարող են պահպանվիլ միայն իրենց համար նպաստավոր պայմաններում: Ընկերքի մեջ վիժումի վարակը կարող է յերկար ժամանակ, նույնիսկ մի քանի ամիս պահպանվիլ:

Տարվա ցուրտ լեղանակին վիժումի վարակը ավելի յերկար ժամանակ է պահպանվում քան ամառը: Ընդհակառակը, չա շատ շուտ վոչնչանում է արեգակի ճառագայթների, չորացման, ջրի մեջ յեռցնելու և ախտահանիչ նյութերի ազդեցութեամբ: Նույնիսկ աթարի փթելու սովորական պայմաններում բավական արագ վոչնչանում է:

Բանգի բացիլները վոչ միայն կովերի, այլ և խոզերի, վոչխարների և այծերի վիժում են առաջ բերում:

Վերջին տարիներս հաճախակի նկատվում են մարդկանց հիվանդանալու դեպքեր՝ ջերմի մի հատուկ տեսա-

կով — մալթյան ջերմով, վորը, ինչպես այժմ գիտութիւնն ապացուցել է, առաջանում է նուշնայես Բանդի բացիւններից:

ԻՆՉՊԵՍ Ե ՎԱՐԱԿՎՈՒՄ ԿԵՆԴԱՆԻՆ

Վարակի ամենապատանգավոր տարածողն ի հարկէ ինքը հիվանդ կենդանն է հանդիսանում, մանավանդ վիժումի ժամանակ: Այդ ժամանակ վարակը մեծ քանակութեամբ արտադրվում է զավակի, ընկերքի և սեռական գործարանների (արգանդի, հեշտոցի) արտադրանքի հետ: Այնուամենայնիւ պետք է նկատի ունենալ, վոր դեռ վիժումից առաջ վարակը յերևում է սեռական գործարանների արտադրանքի մեջ: Վիժումից հետո չիլ յերկար ժամանակ վարակը կարող է արտադրվել: Վարակիչ վիժումով հիվանդ անասունի արտադրութենքը վարակում են իրենց շրջապատը, ցամքալը, կերի մնացորդները գոմը և այլն. նրանք կեղտոտում են նուշնայես անասունի հետույքը, պոչը, վրաքերը, ստիւքը և այլն: Վարակը կարող են փոխանցել նաև անասուններին խնամող մարդիկ, յեթե նրանք անզգուշ են դեպի հիվանդները և մաքրութեան չեն հետեւում: Վարակի տարածման պատճառ են դառնում նաև այն անասունները, վորոնք թեև ըստ յերեւոյթի առողջ են և ժամանակին են ծնում, սակայն իրոք հիվանդ են և վարակ են արտադրում: Պետք է կատարել մանավանդ այն կովերի նկատմամբ, վորոնք ծնել են թուլակազմ հորթեր և վորոնց ընկերքը ծնուց հետո յերկար ժամանակ չեն ընկնում:

Հիվանդութիւնը կարող են փոխանցել նաև հիվանդ

ցուլերը, նուշնայես և այն հորթերը, վորոնք հիվանդ կովի կաթով են սնվում:

Առողջ կովերը վարակվում են սովորաբար վարակւած կերի միջոցով: Վարակւած կամ հիվանդ ցուլերի միջոցով բեղմնավորելիս հիվանդութիւնը նուշնայես կարող է փոխանցվել կովերին: Վարակւած տնտեսութիւններից նուշնայի առողջ ցուլեր կամ հորթեր այս հիվանդութիւնից զերծ տնտեսութիւններ տանելը՝ նուշնայես կարող է վարակի փոխանցման պատճառ դառնալ՝ դրա համար անհրաժեշտ է զգուշանալ վարակւած տնտեսութիւններից առողջ տնտեսութիւններն անասուն տանելուց: Վարակիչ վիժումը հաճախ նկատվում է այն տնտեսութիւններում, վորոնք իրենց հոտը լրացնում են անասուններով՝ ստացված զանազան տեղերից, վորոնց վարակւած լինելը հալտնի չի լեղել, վորտեղ չկան հատուկ սարքւած առանձին շինութիւններ ծնող կովերի համար (ծննդարան), վորտեղ ընդհանրապես վատ է դրված անասունների պահպանումն ու խնամքը: Վարակւած տնտեսութիւններում կովերը մի գոմից մյուսը հաճախակի տեղափոխելը միշտ պատճառ է դառնում վիժումի մասսայական տարածման:

Ընդհանրապես չերը վորեւ, տնտեսութիւն մեջ յեբովան է զալիս վարակիչ վիժումը, հենց սկզբից նրա առաջն առնելը այնքան էլ դժվար չէ. իսկ յեթե ժամանակը անցել է, նրա դեմ պայքարելն արդեն դժվար է:

ԻՆՉՊԵՍ Ե ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՎԻժՈՒՄԸ

Վարակիչ վիժումով վարակվելուց հետո յերկար ժամանակ անասունի ընդհանուր առողջական դրու-

Թշան մեջ վոչ մի փոփոխութիւն չի նկատուում, նույն-
իսկ վիժումը սովորաբար անցնում է աննկատելի՝ ա-
ռանց տեսանելի և առանձնահատուկ նշաններէ։ Վա-
րակիչ վիժումն ավելի հաճախ նկատուում է կովերի
հոգիւթյան 6—8-րդ ամսում, սակայն կարող է պատահել
նաև այդ ժամանակից վաղ կամ ուշ։ Լինում են ա-
ռանձին դեպքեր, յերբ վիժումը կատարվում է դեռ
3—4-րդ ամսում, կամ 9-րդ ամսում։ Այդ կախված է
անատոմիաների տեղադրութիւնից և առողջական դրու-
թիւնից, վարակման ժամանակից և պայմաններից,
ինչպես նաև վարակիչ չափից և ուժից։

Վարակիչ վիժումն ել՝ բնական ծննդաբերութեան
նման, սկսվում է արտաքին սեռական գործարանների
և հեշտոցի ուռչելով և կարմրելով։ Սեռական անցքից
պարբերաբար հոսում է փոքր ինչ կարմրա-դեղնավուն
մի հեղուկ՝ առանց վորներից հոսի։ Ուռչում է կուրծքը
և նվազում է կաթի քանակը։ Այս բոլոր նշաններն
իրենց վրա աւշադրութիւն են գրավում վիժումից մի-
այն մի քանի օր առաջ։

Վարակիչ վիժումի ժամանակ ընդհանրապես հորթը
սատկած է ծնվում։ Թեև յերբեմն ել վողջ է ծնվում,
բայց նա այնքան թուլակազմ է լինում, վոր շուտով
սատկում է։ Միայն հոգիւթեան վերջին շրջանում վա-
րակվելու դեպքում, ծնած հորթը կարող է վողջ մնալ
և մեծանալ։

Վիժումից հետո սովորաբար ընկերքը մնում է, իսկ
սեռական գործարաններից (արգանդից և հեշտոցից)
3—4 շաբաթ հոսում է մուգ կամ կարմրավուն, յեր-
բեմն բոլորովին գարշահոտ հեղուկ։ Վարակված կովե-
րը 2—3 վիժումից հետո կարող են այլևս չվիժել, բայց

պիտք է նկատի ունենալ, վոր նրանք վիժումից հետո
յերբ Կ ժամանակ վարակ են արտադրում։

Յ թե վորեն տնտեսութեան մեջ վարակիչ վիժումի
դադարելուց հետո առողջ հղի կովեր են բերվում, վեր-
ջիններս շուտով վարակվում են և նրանց մեջ ել սկսու-
վում է վիժումը։ Յեթե այդպես վարակված մի տնտե-
սութեանից նույնիսկ ըստ յերևույթի առողջ անա-
սոն եր արվում են չվարակված տնտեսութեան, շատ
հեշտութեամբ վիժումի վարակը կարող է այնտեղ տար-
վել։

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՃԱՆԱԶԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՎԻՇՈՒՄԸ

Ահայտ պատճառից առաջացած բոլոր վիժումներէ
ժամանակ, մանավանդ յերբ այդ մասնապական բնույթ
է ստանում, պետք է յենթադրել, վոր վարակիչ վի-
ժում է։ Յեւ իբրև կանոն, վարակիչ վիժումի պահա-
վորը կապած լինելու դեպքում պետք է անմիջապես
ձեռք առնել նախազգուշական միջոցներ, վորպեսզի վա-
րակը չտարածվի։ Իսկ վարակիչ վիժումն ավելի ճշ-
գրիտ կերպով կարելի չէ վորոշել միայն մանրեալա-
նական հետազոտութիւնների միջոցով՝ հատուկ լաբո-
րատորիաներում։ Հետազոտութեան համար վերցնում
են կամ հեշտոցի թորանքը, կամ ընկերքը և, վոր ա-
մենից լաջն ե՝ վիժած սաղմը ամբողջութեամբ՝ իր բո-
լոր պատշաճներով, և ուղարկում են լաբորատորիա։
Այս բոլորը պետք է հավաքվի այնպիսի խնամքով և
մաքրութեամբ և փաթաթվի այնպես, վոր ուղարկվող
նյութը ճանապարհին չկեղտոտվի և կամ վարակը վո-
րեն կերպով չփոխադրվի մի այլ առողջ տնտեսութեան։

Հաբորատորիայում սաղմը լրիվ ստանալու դեպքում կարող են վորոշել՝ վիժումը վարակիչ բնույթ ունի, թե՞ վոչ վարակիչ:

Բուրը հիվանդ, բայց դեռ չվիժած կովերին կարելի է յերևան բերել միայն արջան քննությամբ: Դրա համար անասնաբուժը չուրաքանչյուր անասունից վեցընում է փոքր քանակությամբ արյուն և ուղարկում է հատուկ լաբորատորիա՝ հետազոտության համար:

Այդպիսի հետազոտության միջոցով, վոր անպայման կրկնվում է մի քանի անգամ՝ վորոշ ընդմիջումներով (3 շաբաթ), կարելի է վորոշել վոչ միայն հիվանդներին, այլ և իրենց մեջ թաղուն վարակ ունեցողներին:

Վարակիչ վիժումի դեմ հաջող կերպով պայքարելու համար չափազանց կարևոր է՝ ինչքան հնարավոր է, շուտ վորոշել, թե տվյալ վիժումը վարակիչ է, թե վոչ:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ՎԱՐԱԿԻՉ ՎԻՇՈՒՄԻ ԴԵՄ

Յերը մանրահարանական քննությամբ հաստատվի, վոր տնտեսության մեջ վարակիչ վիժում կա, խսկույն պետք է պարզել այդ հիվանդությամբ վարակված անասուններին թիվը: Յեթե մեծ տնտեսության մեջ հայտնաբերվում է միայն մի քանի գլուխ հիվանդ, այդ դեպքում նրանք անմիջապես կամ հանձնվում են մի այլ վարակված տնտեսության, և կամ լեթե ավել անասունները մի առանձին արժեք չեն ներկայացնում տնտեսության համար, պարզապես խոտանվում են (բրակ են արվում) և սպանվում են իբրև մսացու: Իսկ չեթե հայտնվում է, վոր անասունների մեծ մասն է վարակիչ վիժումով հիվանդ, այդ դեպքում պետք է

ամբողջ հոտը բաժանել յերկսի՝ առանձնացնելով վանդները առողջներից և նրանց պետք է պահել և արածացնել առանձին, վորպեսզի իրար հետ շփում չունենան: Քանի վոր բուրը վարակիչ վիժումով հիվանդ անասուններին չենք կարող խոտանել իբրև մսացու, ուստի ամենից լավն է վիժումով հիվանդ կովերից կաղմել առանձին տնտեսություններ: Այն կովերը, վորոնք 3-րդ—4-րդ ծննդաբերությունից հետո դադարում են վիժելուց, կարող են դեռ ողտադործվել, իսկ նրանք, վորոնք մնում են ամուլ, պետք է խոտանել և մորթել իբրև մսացու: Յուրաքանչյուր տնտեսության մեջ իբրև կանոն պետք է ստեղծված լինի՝ առանձին ծննդարան (բնական ծննդաբերության համար), ուր պետք է բերվեն կովերը ծնելուց քիչ առաջ:

Հիվանդ անասունները, ավելի ճիշտը՝ վիժող կամ վիժման նշաններ ցույց տվող կովերը, պետք է անմիջապես առանձնացվեն մեկուսաբաններում (իզոլյատոր), իսկ աջն գոմերն, ուր նրանք լեղել են, պետք է ախտահանվեն: Յեթե հորթը վողջ է ծնվել, նրա բերանը և քթածակերը (ռունգեր) լվացվում են 3—4 տոկոսանի իորաթթվի լուծույթով, պորտալարը կապվում է ախտահանված (չեռացնելով, կամ ախտահանիչ հեղուկներով) թելով և կտրվում: Դրանից հետո հորթը մի լավ սրբվում է: Ընկերքը խնամքով հավաքվում է, ախտահանվում և վոչնչացվում: Կովերի ստինքը և մասնավորապես պտուկները լավ լվացվում են ջրով և սապոնով:

Յեթե հոտը բաժանվել է յերկու խմբի (հիվանդների և առողջների), նրանց խնամող տավարապահները պետք է

մշտապես ամրացված լինեն իրենց անասուններին:

Առողջ անասուններին խնամողները չպետք է մշտ-
նեն հիվանդ անասունների շնչերը, իսկ հիվանդ խնա-
մողները՝ առողջների շնչերը: Մեկուսարանում առանձ-
նացված հիվանդ անասուններին խնամելու համար
անհրաժեշտ ե ունենալ սեփական պերսոնալը (անձնա-
կան կադրը), վորը վոչ մի շփում չպետք է ունենա
առողջ անասուններին և չվարակված շինություններին
հետ:

Բոլոր գոմերում, ծննդաբաններում, մեկուսարան-
ներում պետք է լինեն լվացարաններ և ախտահանիչ
հեղուկով լցված շշեր ձեռքերը լվանալու համար: Բո-
լոր կթողները և տավարապահները պետք է հազած
լինեն գոգնոցներ (խալաթ): Արտահագուստը միշտ պետք
է թողնել այն շենքում, վորտեղ կատարվում է աշխա-
տանքը: Գոմի մուտքի առաջ մշտական պետք է լինեն
ախտահանիչ հեղուկով թրջված վոտքի սրբիչներ:

Առողջ կովերի բեղմնավորումը պետք է կատարվի
միայն առողջ ցուլի միջոցով, իսկ հիվանդ կովերի
բեղմնավորման համար պետք է առանձնացվի հատուկ
ցուլ: Կողմնակի ուրիշ տնտեսությունների կովերին հետ
բեղմնավորումը, չեթե այդ տեղի յի ունենում, անշուշտ
պետք է անմիջապես դադարեցնել:

Վարակված տնտեսությունից անասուն չպետք է
դուրս գա առանց անասնաբուժական հսկողության
թույլտվության:

Ա. Խ Տ Ա Հ Ա Ն Ո Ի Մ

Վարակիչ վիժումի դեմ պայքարելու գործում մեծ
նշանակություն ունի սատկած սաղմի և նրա բոլոր

պատշաճները խնամքով հավաքելը և ախտահանելը:

Վիժումը տեղի ունենալուց անմիջապես հետո սատ-
կած սաղմը և նրա բոլոր թաղանթները պետք է զգու-
շությամբ հավաքել մի անթափանց ամանի մեջ, վրան
չեռաբող ջուր ածել և հետո կիպ վրակվող մի սնտուկի
մեջ դնել և զգուշությամբ տանել անասնագերեզմա-
նոցը: Այստեղ այդ բոլորը պետք է թաղել, ինչպես բո-
լոր դիակները, յերկու մետր խորությամբ, իսկ այն-
տեղ, վորտեղ հնարավոր է, ավելի լավ է այրել, կամ
կաթսայի մեջ չիփ տալ:

Այն գոմը, վորտեղ վիժում է տեղի ունեցել, ինչ-
պես նաև նրան շրջապատող գոմերը, իսկուլն ամենայն
խնամքով պետք է մաքրել և ախտահանել: Ախտահան-
ման համար կարելի է վերցնել սովորական չհանգած
կիր, կամ քլորային կեր (хлорная известь), կամ
ծծմբակարբոլյան լուծույթ, կամ պարզապես վերցնել
խիստ տաք ջուր:

Կաթնային տնտեսություններում ախտահանման
համար ուժեղ հոտ ունեցող նյութեր (կարբոլիա, կըր-
կոլին, լիզոլ և այլն) գործածել ցանկալի չէ, վորովհե-
տե կաթը շատ հեշտությամբ վերցնում է այդ նյութե-
րի հոտը:

Ընդհանրապես ամիսը մի անգամ ալդպիսի ախտա-
հանում կատարելը նախապես մեխանիկորեն մաքրե-
լուց հետո, շատ ոգտակար կլինի գոմերի առողջաց-
ման համար:

Բ Ո Ի Ժ Ո Ի Մ Ը

Վիժումից հետո շատ հաճախ կովերի ընկերքը դուրս
չի գալիս, կամ չիրկար ժամանակ շարունակվում է
սեռական գործարաններից թաքախոտ հոսումը: Այս-

պիսի կովերին անպայման պետք է բուժել: Ամբողջ բուժումը սովորաբար այն է, վոր մի վորեն ակտահանիչ լուծույթով արգանդը և հեշտոցը լվանում են: Հանձնարարվում է նախ լվանալ 1—2 տոկոսային սոդայի լուծույթով, իսկ հետո կարելի չէ գործածել մարգալիտ կալիոնի (марганцевокисл. кали — 1: 1000) կամ բորակթվի թեթեւ լուծույթ: Հոսումը դադարելուց հետո, վոր սովորաբար տեւում է 3—4 շաբաթ կարելի չէ կովը տեղափոխել իր նախկին տեղը՝ նախապես նրա հետույքն ամբողջովին և արտաքին սեռական գործարանները մասնավորապես լաւ լվանալուց և ակտահանելուց հետո:

Այն կովերը, վորոնց հիվանդութիւնը յերկարատե բնույթ է ստանում և վոր մի բուժում նրան չի ոգնում, ավելի լաւ է մորթել իբրեւ մսացու՝ տվյալ տեղն տեսութեանը նպաստակող անասնաբուժի թուլտուլութեամբ:

ՎԱՐԱԿԻՉ ՎԻԺՈՒՄՈՎ ՀԻՎԱՆԴԻ ԿՈՎԵՐԻ ԿԱԹՈՐ

Նախապես ասել ենք, վոր Բանգի բացիւնները արտադրվում են վարակիչ վիժումով հիվանդ կովերի կաթի հետ: Այդպիսի վարակված կաթը հում վիճակում գործածելը թե մարդկանց և թե կենդանիների համար վտանգավոր է, մարդիկ կարող են վարակվել մարսողական գործարանների միջոցով՝ հիվանդ կովերի կաթը գործածելուց, կամ կաշվի միջոցով վարակվելուց: Ներկայումս արդեն հայտնի չէ հիվանդ կովերի հետ գործ ունեցող անասնաբուժիների հիվանդանալու շատ դեպքեր: Վարակված տնտեսութիւններում ստացված

կաթը կամ պետք է բաց թողնվի Պաստյորացած ձևով և կամ պետք է վերամշակվի ալլ կաթնամթերքների (յուղ, պանիր և այլն): Համեմատյա դեպք հում վիճակում կաթը բաց թողնելու դեպքում սպառողներին պետք է նախազգուշացնել՝ կաթը յեռացած վիճակում գործածելու անհրաժեշտութեան մասին: Կաթը խոզերին կամ հորթերին տրվելու դեպքում պետք է գործածվի միմիայն լեռացնելուց կամ պաստյորացումից հետո:

ԿԱՐԵԼԻ՞ ՅԵ ՊԱՀՊԱՆԵԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԱԿԻՉ ՎԻԺՈՒՄԻ ՄՈՒՏՔԻ ԳՈՐԾԵԼՈՒՑ

Անհատական տնտեսութեան պայմաններում վարակիչ վիժումի դեմ պայքարելն անհնարին էր: Մինչդեռ խոշոր անասնապահական տնտեսութիւններում՝ խորհանսեսութիւններում և կոլտնտեսութիւններում բոլոր տվյալները կան նրա դեմ պայքարելու, բայց նաև՝ նրա արմատաշուռ համար:

Չվարակված, առողջ տնտեսութիւնները կարելի է պահպանել վարակիչ վիժումի մուտք գործելուց: Իրա համար տնտեսութիւնը նոր բերվող բոլոր անասունները, վորոնք յենթակա յեն այս հիվանդութեան, պետք է պահվեն առանձին (կարանդինա), մինչև 3 շաբաթ տնդոութեամբ, վոր պարզվի նրանց վարակիչ վիժումից թափ լինելը՝ արյան քննութեան միջոցով, վորը կատարվում է յերկու անգամ:

Չվարակված տնտեսութեան բոլոր անասունները վարակիչ վիժումի վորեն ամենափոքր կասկածի դեպքում անմիջապես պետք է ստուգվեն արյան քննութեան միջոցով, կասկածելի անասունները իսկույն պետք է մեկուսացվեն մինչև հիվանդութեան վերջնա-

2468
կանապես պարզվելը: Պետք է զգուշանալ այն ցուրերի
ոգտագործումից, Վորոնց Բանգի բաղիլով վարակված
չլինելը անհայտ է: Վիժումից դեռ չստուգված ցուրով
չպետք է թողնել այլ տնտեսութունների կովերը բեղմ-
նավորել:

Չվարակված հոտի ամեն տեսակի շփումը վարակ-
ված նախիրի հետ, արոտում կամ ջրելատեղում վա-
րակված վայրերից կեր բերելը չափազանց վտանգա-
վոր է: Պետք է լավ հիշել այս բանը և համոզել բո-
լորին՝ սկսած մինչև հովիվը, վորից, ինչպես հայտնի
յե, շատ բան է կախված:

Խոզերին և հորթերին կերակրելու համար չպետք է
ոգտագործել հավաքովի կաթերի մնացորդները վորոնց
մեջ կարող է մուտք գործել վարակված կաթ

Բոլոր այս նախազգուշական միջոցներին հետևելու
դեպքում տնտեսութունը վարակիչ վիժումից պաշտ-
պանելը շատ հեշտ է:



<< Ազգային գրադարան



NL0289179

8533

Գիրք 20 Կ.



Заразительный выкидыш у коров
и
меры борьбы с ним

Госиздат ССР Армении, Эривань 1933